Արձանագրություն N 2
ՄՄԾ ԷԱՃԱՇՁԲ-24/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23 նոյեմբերի 2023թ
ժամը 09:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Կարեն Մկրտչյանը
անդամներ՝ Հասմիկ Ղուլյանը, Գեղամ Սարգսյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի բացման մասին

(Կարեն Մկրտչյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	*Մասնակցի անվանումը*		*Մասնակցի հասցեն և կապի միջոցները*
1	*2*		*3*
1	Քրիստինե Կարապետյան ԱՁ	-	ք. Երևան, Հալաբյան 36/15, հեռ. 033 000 234, qristine190883@mail.ru
2	«Վեքթս» ՍՊԸ*	-	ք. Երևան, Սասունցի Դավթի 70/1շ. բն1 հեռ. +374 94 444-802, vectsllc@mail.ru
3	«Պրինտարմ» ՍՊԸ	-	ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա Անդրանիկի փ. 94 բն.42, հեռ. 091402586, printarm1@mail.ru

*Մասնակիցը ԱԱՀ վճարող չէ

բ/ Մասնակիցների կողմից աճուրդի ամփոփման ժամկետի ավարտին առաջարկված գները հետևյալն են.

Հ/Հ	Մասնակցի	
	անվանումը	առաջարկած գինը առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)
1	2	3
1	Քրիստինե Կարապետյան ԱՁ	2600000
2	«Վեքթս» ՍՊԸ*	3810000
3	«Պրինտարմ» ՍՊԸ	4200000
Գնման գինը (ՀՀ դրամ)		5000000

գ/ Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն պահանջվել և չեն ներկայացվել, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

II. Հայտերի գնահատման մասին

(Կարեն Մկրտչյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց աճուրդին ներկայացրած հայտերը և արձանագրեց, որ.

ա/ «Պրինտարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է գնման գինը:

բ/ էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի կողմից մերժվել է «Պրինտարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը՝ հետևյալ հիմնավորմամբ, առաջարկված գինը գերազանցում է գնման գինը:

2.1 Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Քրիստինե Կարապետյան ԱՁ -ի կողմից ներկայացրած հայտը և արձանագրեց, որ.

ա/ Քրիստինե Կարապետյան ԱՁ -ի ներկայացրած դիմում-հայտարարությունը /հավելված 1/ չի համապատասխանում հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես.

1) ներկայացված դիմում-հայտարարության մեջ բացակայում է մասնակցի բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը և հրավերի 8.9 կետով սահմանված պահանջները, որոշեց.

ա/ մերժել համակարգի կողմից մերժված, 2-րդ և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը հրավերի 8.9 կետով սահմանված պահանջի համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

III. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին

(Կարեն Մկրտչյան)

4. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները, որոշեց.

ա/ հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն կասեցնել հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով և հրավերով սահմանված կարգով՝ համակարգի միջոցով ծանուցել Քրիստինե Կարապետյան ԱՁ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

բ/ ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2023թ. նոյեմբերի 27-ին ժամը 10:10-ին ք. Երևան, Նալբանդյան 13, 4-րդ հարկի դահլիճ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի		
նախագահ	_____	Կարեն Մկրտչյան
անդամներ՝	_____	Հասմիկ Ղուլյան
	_____	Գեղամ Սարգսյան
քարտուղար՝	_____	Գ. Ջանջուղազյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 23 նոյեմբերի 2023թ.

ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-24/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով աշխատանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Մկրտչյանս, անդամներ՝ Հասմիկ Ղուլյանս, Գեղամ Սարգսյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

նախագահ _____ Կարեն Մկրտչյան

անդամներ՝ _____ Հասմիկ Ղուլյան

_____ Գեղամ Սարգսյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան